



## ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2024 թվականի թիվ 18-Ա

ք. Երևան

### «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի փետրվարի 06-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը, **պարզեց**.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագրի մշտադիտարկման արդյունքում հայտնաբերել է Օրենքի դրույթի պահանջի խախտման փաստ:

Ըստ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության զեկուցագրի՝ 2024 թվականի փետրվարի 05-ի ժամը 09:00:33-ից սկսած Հեռարձակողը 24 ժամ շարունակ չի ապահովել «ՖՐԻ ՆՅՈՒՋ» տեսալսողական ծրագրի հեռարձակումը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2024 թվականի փետրվարի 06-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի և 2024 թվականի փետրվարի 12-ին կայանալիք վարչական վարույթի քննարկման նիստի մասին պատշաճ ծանուցել է վարչական վարույթի մասնակցին:

Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 06-ի ծանուցմամբ՝ Հեռարձակողին առաջարկվել է հարուցված վարչական վարույթի վերաբերյալ իրենց պարզաբանումները և բացատրությունները ներկայացնել մինչև վարույթի քննարկումը կամ քննարկման ընթացքում:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի շրջանակներում որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացրել Հանձնաժողով:

**Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.**

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

1. Հեռարձակողի կողմից 2024 թվականի փետրվարի 5-ի ժամը 09:00:33-ից սկսած առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովվել տեսալսողական հաղորդումների հեռարձակումը, և Հեռարձակողի կողմից որևէ գործողություն չի կատարվել խախտումը վերացնելու ուղղությամբ:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 2024 թվականի փետրվարի 05-ի թիվ 28-104 գրության համաձայն՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը որոշում է կայացրել պայմանագրով սահմանված կարգով 2024 թվականի փետրվարի 05-ին ժամը 9:00-ից դադարեցնել Հեռարձակողի «ՖՐԻ ՆՅՈՒՉ» տեսալսողական ծրագրի հեռարձակումը մինչև վերջինիս կողմից պարտքի մարումը:

3. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ և «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությունների միջև 2021 թվականի մայիսի 31-ին կնքված «Հեռուստածրագրի մայրաքաղաքային հեռարձակման» թիվ ԹՀ-2021/04 պայմանագրի համաձայն՝

Պայմանագրի 2.2.2. կետ՝ Կատարողն (ըստ պայմանագրի՝ Կատարողը «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն է) իրավունք ունի՝ առանց նախազգուշացման՝ մասնակի կամ ամբողջությամբ դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Պատվիրատուն խախտում է սույն պայմանագրի 3.2 կետը.

Պայմանագրի 2.3.2. կետ՝ Պատվիրատուն (ըստ պայմանագրի՝ Պատվիրատուն «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊԸ-ն է) պարտավոր է մատուցված ծառայության համար վճարումը կատարել սույն պայմանագրի 3-րդ բաժնում սահմանված կարգով:

Պայմանագրի 3.2-րդ կետը սահմանում է.

«3.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում»:

3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի փետրվարի 06-ի թիվ 01/17.1/1196-2024 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացվել է, որ սույն թվականի փետրվարի 05-ից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից դադարեցվել է Հեռարձակողի «ՖՐԻ ՆՅՈՒՉ» տեսալսողական ծրագրի շուրջօրյա հեռարձակումը պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով:

4. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 2024 թվականի փետրվարի 09-ի թիվ 28-114 գրությամբ Հանձնաժողովին

տեղեկացվել է, որ «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությունը մարել է պարտքը, և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը որոշում է կայացրել 2024 թվականի փետրվարի 09-ի ժամը 13:30-ից վերականգնել «Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագրի հեռարձակումը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի հեղինակագրման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝ լիցենզիա **ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել** տեսալսողական հաղորդումների հեռարձակում:

«Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Լիցենզիայի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

Հանձնաժողովն ամրագրում է, որ վարչական վարույթը հարուցելու պահին առկա է եղել Հեռարձակողի լիցենզիայի գործողության կասեցման հիմք, քանի որ **Հեռարձակողը, չնայած անուղղակիորեն, բայց առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակումը:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

**1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

**2) գործի վարույթը կարճելու մասին:**

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ըստ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության թիվ 28-114 գրության՝ «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությունը մարել է պարտքը, և **Հեռարձակողի եթերը վերականգնվել է 2024 թվականի փետրվարի 09-ի ժամը 13:30-ից**, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ

կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության 2024 թվականի փետրվարի 09-ի թիվ 28-114 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. փետրվարի 12  
ք.Երևան